

Սիրելոյս գտնուած վայրն գարուն կայ,
Մի նամակ գրեմ. արդեօք կուգայ,
Ախ, առնէի իւր նամակը, քսէի երեսիս,
Աշխարհքիս ապրանքը չերևար աչքիս,
Ան սև յունքեր, ոսկեփայլ հիւսուած ես,
Տանեմ քեզ, պանդխտութիւն, ինչ կը գայ
ձեռքէս,
Այլոց նախափորձը, Աստուծոյ դառն հայեացքը
Երկուքն ևս հրգեհնեցին իմ հոգւոյս բուրակը:

Մ. Հայկունի.



ՄԱՆՐԱՆԻ ԴՆԱՊԱՐԱՆԻ

— Մ. Աւետարանի 75 ազոյն ձեռագրի կորած թերթերը գտնուել են: Յունարէն Աւետարանի ձեռագիրներից նազդոյնն եւ նշանաւորն է Զ. դարուց Պատմոսի ձեռագիրը կոչուածը: Այս աւետարանը գրուած է ծիրանագոյն մագաղաթի վրայ եւ ծաղկած է արծաթագոյն եւ ոսկեգոյն: Պատմոսի ձեռագրից ցարդ գտնուած էին 45 թերթ, որոնցից 35 պահուում էին Պատմոսում, 6 թերթ վատրկանում, 4 բրիտանական մուսէոնում եւ 2 — Վիեննայում: Թէպէտեւ Թիլենդորֆի անունով յայտնի աւետարանի ձեռագիրը սրանցից 75ն է, քայք սա նշանաւոր է իւր արտաքին գեղարուեստական ձեւով: Ձեռագրիս պակաս թերթերը գտնուել են այժմ Տաճկաստանում, Կեսարիոյ շրջակայք մի փոքրիկ գիւղական եկեղեցում, համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այդ թերթերը թէ մագաղաթով, թէ գրութեամբ եւ թէ քնագրով լրացնում են յայտնի Պատմոսի թերթն: Այս գիտի լուրը տարածուելուն պէս բազմաթիւ գնողներ շոյս ընկան, գնատուրարք անգլիացիք եւ ամերիկացիք, բայց վերջ ի վերջոյ այդ թանգարանի նշխարը գնեց ռուսաց կառավարութիւնը 25,000 ֆրանկով:

— Եգիպտական արձանագրութիւններ իւր ժամանակէն լսուած է սփռուած. Իսրայէլացւոց եւ քի վրայ Եգիպտոսից: Ինչպէս արօժէտը Պետրին հաղորդում է արգելական, „Contemp. Review“ մայիսի տետրում գտնուել է այն փարաւոնի մի արձանագրութիւնը, որի ժամանակ Իսրայէլացիք զուրս եկան Եգիպտոսից: Արձանագրութեան հիման վրայ կարելի է եզրակացնել, որ Իսրայէլացւոց մի մասը դեռ Բանանումն էր ապրում: մինչ միւս մասը գերութեան մէջ էր Եգիպտոսում: Հետազոտողի կարծիքով Իսրայէլացւոց եւրո կատարուել է 1200 թ. Բրիտոսից առաջ, Մերիմպուտի փարաւոնի ժամանակ:

— Ռոքոքիւնի բազմալեզու եւան աւտուածաշնչի մի կտորը գտնուել է այս օրերս: Ռոքոքիւնի բազմալեզու եւան աւտուածաշնչը կոչուում էր Կեքզաւայ վեցիլեան, որովհետեւ քնագիրն վեց (երեսն իսկ ութ) էջերի վրայ դէմ առ դէմ էին դրուած աւտուածաշնչի քնագիրն ու թարգմանութիւնները: Այս երկասիրութեան կարծես զգացուեց այն ժամանակ, երբ քրիստոնեայ յոյները վիճարանութեան քունելով հրէաների հետ միշտ լսում էին, որ աւտուածաշնչի քնագրում այս ինչ կտորն այլ կերպ է, քան իւր եօթանասնից թարգմանութեան մէջ:

Վեցիլեան աւտուածաշնչի առաջին էջը բռնում էր երրայեղէն քնագիրն երրայական տառերով, ապա նոյնը յունարէն տառերով, երրորդում դրուած էր մի ըստացի թարգմանութիւն, որ Հաղիմանոս կայսեր ժամանակ մի հեքիայ Արքիլա անունով պատրաստել էր, չորրորդ էջում դրուած էր Սիւմեթրա Սամարացու թարգմանութիւնը, հինգերորդում եօթանասնից թարգմանութիւնը, վեցերորդում Թէոփոսի թարգմանութիւնը: Բանաւտեղծական հատուածների համար գործ էին դրուում եւ այլ յայտնի թարգմանութիւններ, որով աւտուածաշնչի այդ մասերը ութիջեան էին դառնում: Այս ծանր եւ մեծագնի գործի ծախքերն հոգում էր մի ծերակուտի անդամ Ամբրոսիոս անուամբ, ուստի եւ Ռոքոքիւնը վարձել էր 7 արագագիրներ եւ 7 գեղագիր աղէկուք: Մինչեւ այժմ այս աւտուածաշնչից ոչ մի հատուած չէ կտր, միայն վերջերս լսուեցաւ, որ Միլանում մի կամօղիկ կրօնաւոր Զիովանի Մերկատի անունով գտել է մի կրկնագիր յունական ձեռագրի մէջ վեցիլեան թերթից: Հետազոտութիւնը ցոյց է տալիս, որ այս գտնուած հատուածն ամփոփում է 11 ստղմոս, միայն թէ առաջին էջը երրայեղէն տառերով (երրայեղէն քնագիրը) չէ կայ, երկրորդում կայ յունարէն տառադարձուած երրայեղէնը, երրորդում Սիւմեթրայի թարգմանութիւնը, հակառակ քարդ յայտնի կարգին, ապա Արքիլայի թարգմանութիւնը, յետոյ եօթանասնից, Թէոփոսիին եւ տարբեր ընթերցումք:

— Սիրաքի գիրքի երրայեղէն քնագիրն, որ 2000 տարիից ի վեր կորած էր համարուում մասամբ գտնուել է գտնուել է Միլայի վրայ ապրական աւետարանի ձեռագրի գտիչ անգլիացի օր. Լեռնիս: Անգլերէն „Academy“ ամսագրի մէջ հրատարակուած տեղեկութիւնից երևում է, որ այս հատուածը առաջին շարայարեալ քնագիրն է Սիրաքի, որ ցարդ անյայտ էր:

* *

— Հունագրիոյ հազարամեակը լրացաւ այս տարի մայիսի 2-ին, այս առթիւ Հունգարիան մի համազգային տոնախմբութիւն կազմեց, որ այժմ ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնն է գրաւում: Հազարամեակի առթիւ կազմուած ցուցահանդէսը պիտի տնել կէս տարի, սերան պիտի մասնակցել ամբողջ երկիրն: Հազարամեակի տոնախմբութիւնը յաւերժացրել են բանալով Բուդա—Պեշտում ազգային ժողովի նոր շէնքն եւ հիմնելով Հունգարիայում 500 ժողովրդական դպրոց, սրանց պիտի աւելանայ եւ քաղմաթիւ պատմական յուշարձանների քանոն: Հազարամեակի ցուցահանդէսի մի բաժինը ներկայացնում է Հունգարիոյ աստիճանաշար զարգացումն տասն դարերի ընթացքում, միւս բաժինը այժման վիճակի երկրագործութեան, արդիւնաբերութեան եւ գիւղատնտեսների: Միակ սեւ բիծն այս փառաւոր տոնախմբութեան այն է, որ Հունգարիոյ մէջ քերուած այլազգիք, սլաւոններն ու գերմանացիք չեն դադարում միմեանց յետեւից բողոքել իրենց դէմ գործ դրուած մշտնաւոր համար:

— Զուլիցեքացի յայտնի մեծ քուժիչ Եւլատտէր անունով սուտ Բրիտոսի մասին մի ժամանակ մեծ աղմուկ հանեցին (մերիկայում, այժմ Լոնդոն քաղաքի լրագիրն յայտնում է, որ Եւլատտէրն, յայտնի կ'օմէրկան դի մէկն է, որ օգտուելով իւր արտաքին կերպարանքից նա նման է Բրիտոսի աւանդական այն պատկերին, որպէս նկարչները սովորաբար պատկերացնում են

ժողովին խաբում է ժողովողին շահասիրական նպատակներով:

— Ոգեւից ըմպելիների աւերիչ ազդեցութիւնն Քրիստոսեայում արդէն իսկ սարսափ են ազդում: Վիճակագրական տեղեկութիւններից երեւում է, որ մինչ 1860 - 94 թուականների ընթացքում Փարիզի քնակիչների թիւն մի երրորդով է աւելացել, սակայն քնակիչներն երեք անգամ աւելի են խմել: Գրան առաջ: Սրա հետեւանքն է որ Սէնայի նահանգում յիմարանոցներում 380 հոգի աւելի են տեղաւորուած քան թէ մի տարի առաջ: Ոգեւից ըմպելիների այլ հետեւանքներն են աւելի են յաճախել, այսպէս հետզհետեւ աւելանում են թուլամտներն, ընկճաւորներն ու անդամալուծներն:

— Ժողովողական դպրոցներն Անգլիայում բոլորովն այլ կազմակերպութիւն ունեն, քան Եւրոպայի միւս երկրներում, թէպէտեւ այնտեղ գոյութիւն ունին հասարակական առանց դասնութեան ժողովողական դպրոցներ (Board school), բայց ամէն մի դասնութիւն ունի իւր սեփական ուսումնարաններն, որովհետեւ հասարակական դպրոցներում կըսն չէ աւանդուում, այլ Ս. Գրքի ուսումն, որ պարտաւորիչ չէ: Կառավարութիւնն բոլոր դպրոցներին աշակերտների հաշուով նպաստ է տալիս, որ համում է 7 միլիոն ուրբու: Ժողովողական դպրոցների պահպանութեան ծախքն համում է 10 միլիոն ուրբու, ուստի պակասորդը լրացնում են համայն քններն: Այժմ Անգլիայում կան 49,800 ժողով. դպրոցներ 5,966,272 դպրոցական հասակի մանկանց համար, զրանցից 44,954 դպրոց պատէ է անգլիկան եկեղեցին, 994 կաթոլիկները, մնացածները պահպանում են զանազան բողոքական դասնութիւնը: Դպրոց յաճախում են 4,546,426 մանկուքն, ուրիմս 75 առ հարիւր: Իւրանչիւր աշակերտի վրայ ծախսուում է 25 ուրբի տէրութեան դպրոցներում 48 ու. Անգլիկան դպրոցներում, 46 ու. կաթոլիկների դպրոցում: այնպիսի էլ միաներումը: Ամենից շատ ստանում են հասարակական ուսուցիչը: Անգլիկան եկեղեցին տարեկան 9 միլիոն ուրբի նուէր է ստանում դպրոցների համար:

Ա Զ Գ Ա Յ Ի Ն.

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻԽՈՒՆԻ ՕԲԷՆՈՒԹԵԱՆ ԷԱՆԴԵՍԸ.

Անձկանօք սպասուած օրն եկաւ: Վեհափառ Հայրապետը Վարազայ ս. խաչի տօնին պիտի սրբալոյս միւռոն օրհնէ: Ահա մի աւետիս որին հայ ժողովուրդն սպասում էր Վեհափառ Հայրապետի գահ բարձրանալու օրունակից: Սրբալոյս միւռոնն այն խորհրդաւոր նշանն է, որով բոլոր հայ քրիստոնեայք ի մի եղբայրութիւն են դրօշմուում ի Քրիստոս:

Դարերից ի վեր խորհրդաւոր է եղել ս.

միւռոնի օրհնութեան հանգէսը. ամենայն նեղութեանց ենթակայ, անդուլ հալածուող և ցրուած հայ ժողովուրդն միշտ յիշել է իւր կապն ու միութիւնն այդ հանգիսի առթիւ: Խաւար և անմխիթար օրերումն հայը մխիթարուել է ս. միւռոնի հանգիսի ակնկալութեամբ և երբ եկել հասել է այդ օրն, նա հոգեւոր հրճուանքով ի մօտոյ և ի հեռուստ մասնակից է եղել այդ հանգիսին: Ամէն անգամ, երբ ս. միւռոնի օրհնութեան հանգիսի անունն է արուում, մեր աչքի առաջ պատկերանում է Ս. Էջմիածինն իրբւ մի կենդրոնաձիգ և մշտափառ ջահ, որի շուրջն հաւաքուում են ամենուրեք ցրուած հայերը: Հեռու շին այն ժամանակներն երբ ուխտաւորներն երկար ու ձիգ կարաւաններն ամենայն նեղութեանց յաղթելով ամիսներ, շաբաթներ և օրեր ճանապարհ էին կտրում և իրենց կարօտն առնելու դիմում գէպի Միածնաէջ ճաճարն: Ամէն մի ուխտաւոր մի փափագ ունէր միայն համբուրել Իջման տաճարն, ս. Լուսաւորչի աջն և սրբազան Հայրապետի օրհնութիւնն առնել, տեսնել հայրենի այն վայրերն, ուր ոտք են կոխել մեր ս. հայրերն, պանծալի նախնիք:

Բարեպաշտ ուխտաւորներից շատերն այդ օրուան էին սպասում որ գան Ս. Էջմիածին և իրենց երկար տարիների ուխտը կատարեն, իրենց փայտայած խոստումներին լրացումն տան:

Աւելի ևս գնահատելի էին Ս. Էջմիածնի համար այն կարօտեղ ժողովրդի ուխտերն, որ անկարող էր անձամբ գալ, որ իւր ուխտն ուրիշներին էր յանձնում կատարելու, իւր բարեպաշտական նուէրներով յայտնում էր Ս. Էջմիածնին իւր որդիութիւնը:

Ս. միւռոնի յայտարարութիւնը տարով առաջ էր յայտնուում ժողովրդին, որպէս զի ոչ ոք չը զրկուի այդ աւետիսից, ոչ ոք անմասն չը մնայ այդ ս. օրհնութեան շնորհներին:

Ժամանակները փոխուել են, դրանց հետ փոխուել է և Ս. Էջմիածնի ուխտաւորութեան